ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«05» հոկտեմբերի 2018 թ.
No 1/18-2/59042-18

«Վահրամ Առաջին» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վալերիկ Վարդանյանին
ք. Աբովյան, Դարանի փողոց 5 շենք, բն.40
հեռ.՝ 093 66 01 04, էլ. Հասցե՝ vardanyan59.59@bk.ru

Հարգելի պարոն Վարդանյան

Համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Վահրամ Առաջին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև ՀՀ ՊԵԿ Երևան քաղաքի Աիարոնյան 12/3 հասցեի մասնաշենքի վերանորոգման աշխատանքների կատարման համար 2018 թվականի հունվարի 18-ին կնքված թիվ-ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-(18/1Վ)-3 ծածկագրով «Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման» պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) թիվ- 2 հավելվածով՝ Օրացուցային գրաֆիկով (Համաձայնագրի կնքման ամսաթիվ՝ 11.07.2018թ.) նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված՝ «Վահրամ Առաջին» ՍՊԸ-ն պարտավոր էր մինչև 2018 թվականի սեպտեմբերի 21-ը կատարեր 4 257 130 ՀՀ դրամի աշխատանքներ, սակայն մինչև նշված ժամկետը կատարել է 391 040 ՀՀ դրամի աշխատանքներ: ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2018 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ-1/18-3/54494-18 գրությամբ նախազգուշացրել էր «Վահրամ Առաջին» ՍՊԸ-ին, որպեսզի Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարվեն, այլապես Պայմանագրից բխող տույժերի և տուգանքների կիրառումը ընկերության նկատմամբ կլինեն անխուսափելի:

Տեղեկացնում եմ, որ Պայմանագրով սահմանված ժամկետում վերը նշված աշխատանքները Ձեր կազմակերպության կողմից չեն կատարվել և խախտվել են Պայմանագրի էական պայմանները: Հետևաբար, Պայամանգրի 3.1.4 ենթակետի

համաձայն՝ Պատվիրատուն ստիպված է միակողմանի մասնակի լուծել Պայմանագիրը 3 866 090 ՀՀ դրամ չկատարված աշխատանքների մասով:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 3.1.4 ենթակետի «ա» և «բ» պարբերությունների պահանջները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2018 թվականի հոկտեմբերի 5-ից միակողմանի մասնակի լուծում է 2018 թվականի հունվարի 18-ին կնքված թիվ-ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-(18/1Վ)-3 ծածկագրով պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի 6.2 և 6.3 կետերի համաձայն «Վահրամ Առաջին» ՍՊԸ-ից կգանձվի 19 331 ՀՀ դրամ տուգանք և 27 063 ՀՀ դրամ տույժ:

Առդիր՝ 1 ֆայլ:

X

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատ.՝ Գ.Ղազարյան
Գնումների համակարգման բաժին
Հեռ.՝ 060-544-704